

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՄԱՆԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՅԺՄԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

1. Անցեալ դարու 90-ական թուականներից մանկավարժութեան մէջ մի ուժեղ շարժում սկսուեց, որ տարածուելով կուլտուրական երկրներում ստիպեց բոլոր մանկավարժներին մասնակցել դրան։ Էլլեն-Աէյ՝ Սկանդինավեան աշխարհի կին գրող՝ այդ երեսյթը բացատրում է՝ նրանով, որ ի նպաստ մանուկների աղատագրման հասարակական ոգևորութիւն է առաջ եկել, և որ այժմ մանուկներն են յարդանք, իրաւունք նուաճել, և Էլլեն-Աէյը ներկայ դարն անուանում է «մանուկների դար»։

Մանկավարժական այս նոր շարժումը կնքուած է Պեղոլօգիա անունով, որ կազմուած է յունարէն ուշ-մանուկ և լոց-բան խօսքերից—մանկարանութիւն։ Պեղոլոգիա խօսքն առաջին անգամ երեան եկաւ 1893 թ. Օսկար Արիզմանի դիսսերտացիայի մէջ։ և ամենից յարմարն է մանկագիտական շարժման սկզբնաւորութեան տարին համարել այդ թուականը։

Մանկագիտութիւնն աչքի է ընկնում, ամենից առաջ, իւր քննական, գիտական բնոյթով։ Այդ ուղղութիւնը խախտեց մանկավարժական հին հիմունքները և ստիպեց բոլոր մանկավարժներին մտածել յաւիտենական խնդիրների նոր մշակման մասին։ Այստեղ էլ, ինչպէս իւր ժամանակին, և միւս գիտութիւնների մէջ, նախ սկսուեց բոլոր հիմնական դրութիւնների քննադատութիւնը։ «մանկավարժութիւնը ամեն ինչ ասել է, բայց ոչինչ չէ ապացուցել»։ այսպէս բնորոշեց պեղոլոգիան հին մանկավարժութիւնը և իրեն նպատակ դրեց չընդունել ոչ մի նորմ՝ նախքան ձիշտ էքսպերիմենտալ մեթոդներով ստուգելը։

2. Ինչով է տարբերում մանկագիտութիւնը հին մանկավարժութիւնից։ Նա տարբերում է թէ առարկայով և թէ մեթոդով։ Մանկագիտութեան առարկան այժմ հանդիսանում է ոչ միայն դպրոցական երեխան, ուսուցիչը կամ միմիայն դպրոցը, այլ այն բոլոր պայմանները, որոնք ուղղութիւն են տալիս երեխայի զարգացման։ Ակնյայտնի է, որ այստեղ ուսումնասիրութեան առարկան աւելի ընդարձակուել է։ Բացի դրանից մանկագիտութիւնը բոլոր կինսական երեսյթներին, լինին նրանք քաղաքական, տնտեսական կամ զեղագիտական բնոյթի՝ մօտենում է, ամենից առաջ, երեխայի

ամբողջութեամբ, իրենց անմիջական դրութեան մէջ։ Մանկագիտութիւնը զլխաւորապէս մշակւում է մասնագէտների միջոցով, որոնք հիմնական հոգերանական պատրաստութիւն ունեն։

4. Մանկագիտութիւնից միայն գիտական-տհասական սիստեմ չի պահանջւում, այլ և իսկական ուսուցիչ-դաստիարակներ պատրաստել։ Լաւ ուսուցչից պահանջւում է ոչ միայն իւր առարկան իմանալ, այլ և կարողանալ յարմար ձևով, իւր գիտութիւնն աշակերտներին աւանդել, ուրիշ խօսքով ուսուցչի իդէալն է լինել զիտնական իւր մասնագիտութեան մէջ և միաժամանակ ստեղծագործող արուեստագէտ ուսուցման և դաստիարակութեան գործում։ Այն ուսուցիչն է մօտենում գիտնականութեան, որը իւր առարկային տիրապետում է այնքան, որ գիտէ նրա պատմական զարգացումը. ժամանակակից դրութիւնը, մշակման ճիշտ մեթոդները և վերջապէս ինքն էլ նպաստում է այդ գիտութեան զարգացման։ Բայց ամենալաւ գիտութիւնն էլ իւր նպատակին չի հասնում, եթէ նա չէ բացատրուած գեղարուեստորէն՝ աշակերտներին դիւրմբոնելի ձևով։ Բայց ինչ է հարկաւոր, որ ուսուցիչը ստեղծագործող—գեղարուեստագէտ լինի։ Մանկավարժը նախ քան դասաւանդելը, մանաւանդ դասարանում, պէտք է ուսումնասիրէ և հետազօտէ մանուկների հոգերանութիւնն ու ընախօսութիւնը, մանուկների զարգացումը և այլն, որի համար կան յատուկ մանկագիտական լաբորատորիաներ. Դասաւանդողը անհրաժեշտորէն պէտք է գիտենայ մասսաների որոշ հասակների առանձին ապրումների հոգերանութիւնը, պէտք է զբաղուի երկու սերունդների (չափահաս և մանուկի) փոխյարաբերութիւնների պարզաբանութեամբ, էսկան տարբերութեամբ, պէտք է անցնի իւր առարկաների մեթոդիկան ու դիդակտիկան, վերջապէս փորձուած մանկավարժների ղեկավարութեամբ, փորձական դասեր պէտք է տայ և այդ բոլորից յետոյ միայն երիտասարդ մանկավարժը կարող է իրեն հաշիւ տալ՝ արդեօք պատրաստ է մի այդալիսի դժուար միսսիայի թէ ոչ։

5. Յաձախ առարկում են, որ յաջողութեան համար, բաւական է ուսուցիչը ունենայ սէր դէսլի մանկավարժական գործը։ Սովորաբար զտնում են, որ մայրերն ու բանաստեղծները սիրում են երեխաներին և ընածին ընդունակութիւն ունին մանկական հոգին հասկանալու։ Ինչով է բացատրում այդ երեխյթը և ինչ գծերով է ընորոշում այդ ընդունակութիւնը։ Մայրերն ու բանաստեղծները վառ երեխայութիւն ունին և նրանց համար աւելի հեշտ է ամեն մի բոլէ երեխայի կոնկրետ դրութեան մէջ փոխադըրուել, նրանք աւելի կարող են զգալ ուրիշների ապրումները։ Նրանց մէջ աւելի ուժեղ է սեփական մանկական ապրումների

շահերի տեսակէտից. ոչ թէ երեխան է ստեղծուած ու սման համար, այլ ուսումը երեխայի համար: «Պէտք է պահանջել ոչ թէ սխոլոցինարիա, այլ պետոցինարիա» ասում է ամերիկացի գիտնական Ստենլի Հոլլը: Ինչ վերաբերում է մեթոդներին՝ պեղոլոգիան ոչ թէ հին մանկավարժութեան նման միմիայն օգտուում է երեխաների վրայ արուած պատահական դիտողութիւններից կամ անձնական վերյիշումներից և կամ զեղարուհստական դրականութեան աղրիւրներից, այլ այսուեղ գործադրուում են բոլոր մեթոդները, առանձնապէս փորձն ու էկսպերիմենտը: Այսպէս ուրեմն, պեղոլոգիան այն դիտութիւնն է, որի առարկան է երեխայի զարգացումն ու բաղդը որոշող բոլոր սլայմանները, որ բոլոր երեխները քննուում է նոր սերնդի շահերի տեսակէտից և գործադրուում է դիտութիւնների բոլոր մեթոդները:

3. Մանկագիտութիւնը դեռ անմշակ է. նա առայժմ չէ հանդիսանուում սխոտեմատիկ կերպով հիմնաւորուած դիտութիւն, այլ միայն ուրիշ մի քանի գիտութիւնների առանձին մասերի ամբողջութիւնն է ներկայացնուում: Ինչպէս բժշկութիւնը արդիւնք է բնական դիտութիւնների (ֆիզիքա, քիմիա, անատոմիա, ֆիզիոլոգիա և այլն) տեսական ուսումնասիրութիւնների և կլինիկաներում գործնական աշխատանքների, այնպէս էլ մանկագիտութիւնը բազկացնուում է մի քանի տեսական և գործնական դիտութիւններից և մանկագիտութիւնը դեռ ճշտորէն բնորոշուած դիտութիւն չէ, ասում է Ստենլի Հոլլը, նա մասամբ հոգեբանութիւն, մարդաբանութիւն է, մասամբ բժշկութիւն և առողջապահութիւն» Ռինեն՝ հին մանկավարժութիւնը ժամանակակից մանկագիտութեան հետ համեմատելով, ասում է՝ «մանկավարժութիւնը հին սայլակ է, որը ճշճըսում է և չափազանց դանդաղ շարժւում, բայց այնուամենայնիւ առաջ է գնում: Մանկագիտութիւնը ճիշտ մեքենայ է՝ խորհրդաւոր, փառահեղ, բարդ կազմութեամբ, որ առաջին հայեացքից ապշեցնուում է, բայց նրա առանձին մասերը կարծես միմեռնց յարմարեցրած չեն, և մեքենան միայն մի պակասութիւն ունի՝ չէ գործում: Մանկագիտութեան կառլը միւս գիտութիւնների հետ կարելի է տեսնել բոլոր երեք ուղղութեամբ՝ թէ բնական, թէ հասարակական և թէ նորմատիւ գիտութիւնների հետ: Բայց մանկագիտութիւնը առանձնապէս հոգեբանութեան հետ է կապուած՝ քանի որ նա աշխատում է մանկավարժական ֆակտը նախ հոգեբանորէն հետազոտել ու բացատրել: Փամանակակից հոգեբանութիւնը հսկայական յառաջադիմութիւններ է արել, շնորհիւ այն բանի, որ ուսումնասիրում է ոչ թէ հոգու էռթիւնը, անմահութիւնը, կամ հանդերձեալ կեանքի իմաստը: այլ գիտակցութեան բովանդակութիւնը, նրա արտայայտութիւններն ու ապրումները՝

վերյիշումը, որ նոյնպէս նպաստում է երեխայի առրումնիրը արագ ըմբռնելու: Պէտք է ունենալ նաև տակտ իւրաքանչիւր պահանջուած բոլէին ամենանպատակայարմար կերպով վարուելու համար, բայց հասկանալի է. որ նովատակայարմար վարուել կարող է նա, ով իւր պիտակից վարմունքները՝ յաճախակի կրկնութեան միջոցով բնազդի աստիճանին է հասցրել, ով իւր կանոնաւոր վարմունքների տեխնիկան զարգացրել է մինչև մեքենայականութիւնը:

Եթէ երաժշտագէտը պէտք է լրիւ ափրապետէ իւր տեխնիկային, որպէսզի լսողների վրայ ազդել կարողանայ, եթէ անհրաժեշտ է, որ ջութակահարը 10—15 տարի զործ դնէ իւր արուեստի կատարելազործման վրայ՝ ուսկնդիրներին զբաւելու համար, միթէ ուսուցիչը պարտաւոր չէ որ և է տեխնիկա մշակել, նախ քան իւր պաշտօնի գլուխն անցնելը: Մայրը կարող է երեխայի բոլոր ապրումները իմանալ. նրա հետ մխասին խնդալ և արտասուել, բայց դա գործի միայն առաջին շրջանն է. ապրելուց զատ պէտք է հասկանալ և բացատրել ամեն մի ֆակտը: Տեխնիկան մշակելու պահանջը ուրիշ ոչ այլ ինչ է, եթէ ոչ տակտ զարգացնելի: Մանկազիտութիւնը տակտ զարգացնելու համար առանձնապէս պէտք է մտածէ: Տակտ ունենալ անհրաժեշտ է և բոլոր արհեստների մէջ և այս դէպքում մանկավարժութիւնը բացադիր տեղ չէ գրաւում: Տակտ է հարկաւոր և իրաւաբանին, և բժշկին, և ամեն մէկին:

6. Մանկավարժական տակտ զարգացնելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ երիտասարդ ուսուցիչները նախքան դասաւանդելը կարողանային մանուկներին ուսումնասիրել և իրենց մանկավարժական ոյժը ստուգել փորձուած ուսուցիչների ղեկավարութեան տակտ: Այսպէս ուրեմն՝ մանկազիտութիւնը ձըգտում է լինել և գիտութիւն և գեղարուեստ ու աշխատում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց մէջ ուսուցիչները կարուեստագէտներ կարողանային պատրաստուել: Երազբաղման խնդիրներն են՝ ա. ուսումնասիրել երեխայի հոգերանութիւնը և երեխայի զարգացման աստիճանները, բ. հետազոտել այն բոլոր արտաքին պայմանները, որոնց մէջ է անցնում երեխայի կեանքն ու զարգացումը. գ պարզել դաստիարակութեան ընդհանուր իդեալը և դ. մշակել դաստիարակութեան յարմարադոյն միջոցներ:

7. Բնորոշենք համառօտ կերպով, թէ ինչ վիճակի մէջ է գտնուում մանկազիտութիւնը Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Ռուսաստանում:

Ամերիկայում մանկաբանութիւնը շատ լայն ծաւալ է ստացել. ծնողները, հոգերանները, բժիշկները և մարդարանները միասին մշակում են մանկավարժական խնդիրները: Գլխաւոր ներկայացուցիչն է Սանֆլի Հոլլը. կրթութեամբ աստուածաբան, Առնդի

մօտ էքսպերիմենտալ հոգեբանութիւնն ուսումնասիրելով և Եւրոպայում ճիշտ մեթոդների հետ ծանօթանալով՝ նա այդ մեթոդները փոխադրեց մանկավարժութեան շրջանը։ Ա. Հոլլ իւր «Adolescence» հոյակապ աշխատութեան մէջ տալիս է պատանեկութեան բնութագիրը՝ հիմնուած հոկայտկան նիւթերի վրայ։ Հէնց նա էլ կազմակերպել է բազմաթիւ լաբորատորիաներ և գործը հաստատուն հողի վրայ դրել։ Ամերիկայում լոյս են տեսել նաև շատ առանձին, արժէքաւոր աշխատութիւններ։ Կիրապատրիկը իւր «Մանկան հոգեբանութեան հիմունքներն» աշխատութեան մէջ վերլուծում է մանկան հոգեբանութիւնը բնազդների տեսակէտից։ Չեմքերէնը, իւր «Մանուկ» երկհատոր աշխատութեան մէջ, ուսումնասիրում է մարդաբանութեան և մանկագիտութեան մէջ եղած կապը, և փորձում է գիտական հիմնաւորում տալ Ճեկկելի մշակած այն հայեցքին, թէ օնտոգենեզիսի (անհատի զարդացման) մէջ կրկնւում է, կարճ կերպով ֆիլոգենեզիսի (ամբողջ մարդկութեան զարգացումը)։ Կրումմանկը իւր «Ներածութիւն մանկան ուսումնասիրութեան» գրքով մանկաբանութեան ուսումնասիրութեան սիստեմատիկ ձեռնարկն է տալիս։ Ամերիկացի յայտնի հոգեբան Զէմսն էլ սլակաս նշանակութիւն չէ ունեցել Ամերիկայի մանկագիտութեան մէջ։ Ամերիկական շարժումը՝ ինչպէս իրաւացիօրէն արտայայտում է Ռումիանցեր իւր «Մանկաբանութիւն» գրքում, տարածւում է լայն կերպով, մանկավարժական խնդիրները մշակւում են ու տաս և այդ աշխատանքներին մասնակցում են թէ մասնագէտները և թէ դիլետանտները։ Մանկան հոգու ուսումնասիրութեան նույրուած են շատ մասնագիտական թերթեր և լաբորատորիաներ։ Մանկագիտութեան կապը մարդաբանութեան հետ առանձնապէս ուժեղ է Ամերիկայում։

8. Անգլիայում այդպիսի մեծ ջանքեր չեն նկատւում։ Անգլիական հոգեբանութիւնն իւր որոշ ուղղութիւնն ունի Սպենսերի, Միլլի, Թէնի աշխատութիւնների մէջ։ Որպէս մանկագէտ կարելի է յիշել Զեմս Ուկուլին, որը, զլիսաւորապէս ծնողների միջոցով հաւաքուած նիւթերի հիման վրայ, տալիս է սիստեմատիկ կերպով իւր «Մանկավարժական հոգեբանութիւնը» և «Մանկան ուսումնասիրութիւն» գրերը։ Այդ երկու աշխատութիւններն էլ չափազանց ժողովրդական և սլարդ գրուած՝ իօսում են մանկան հասակի ընդհանուր հոգեբանական առանձնայատկութիւնների մասին։ Հետաքրքիր են դիտնական Միւնստերիցի ինքնուրոյն աշխատութիւնները, առանձնապէս նրա «Ուսուցիչ և հոգեբանութիւն» գիրքը, որի մէջ նա խօսում է դաստիարակութեան իդեալների, մանկավարժական միջոցների և երեխայի հոգեբանութեան մասին։ Անգլիայում նոր, եռանգուն մանկագէտներից մէկն է հանդիսա-

նում նաև Սպիրիտանը իւր նոր «corrélation» մեթոդով, որով ուսումնասիրում է առանձին հոգեկան ապրումների փոխադարձ կապը: Ինչ վերաբերում է անզլիական մանկագիտութեան ընդհանուր բնորոշման՝ չնայելով որ այնտեղ դպրոցները լաւ վիճակի մէջ են, տեսականը առայժմ այլքան ուժեղ չէ:

9. Ֆրանսիան՝ Տէնի և Ռիբոյի աշխատութիւններով՝ նոյնպէս իւր հոգերանական ուղղութիւնն ունի, կապուած կենսաբանութեան և ընկերաբանութեան հետ. Մանկաբանութիւնը գտնուում էր, վերջին ժամանակներս գլխաւորապէս, նշանաւոր գիտնական մինչի զեկավարութեան տակ: Նրա աշխատակիցներն են Սկոյտէն, Շերի, Կլապարես, Բուեյքո և Կոմպէյէ: Ֆրանսիայում առանձնապէս հետաքրքրուում են աշակերտների անհատականութեան և ընդունակութիւնների պարզաբանութեամբ: Այդ խնդիրն առաջացաւ յետամեաց, խելագար, խուլ և համբ մանուկների ուսումնասիրութեան գործնական պահանջներից: «L'année psychologique» ամսագրում գտնուում են զլխաւոր ֆրանսիական աշխատութիւնների անզրադառները: Հետաքրօիր են Քինչի «Նորագոյն մտքեր երեխայի մասին», Կլապարեսի «Երեխայի հոգերանութիւն և էկսպակերիմենտալ մանկավարժութիւն», Քինչ և Շերի-ի «Մտաւոր յոզնածութիւն» Քինչ և Սիմոնի «Երեխաների մտաւոր զարգացումը» աշխատանքները:

10. Թէև յիշեալ երեք երկրներում մանկաբանութիւնն անընդհատ զարգանում է, բայց հիմնական աշխատանքը զլխաւորաւորապէս կատարուում է Գերմանիայում: Թուելով միմիայն մեծուժերը, ինչպիսիք են Վոյման, Շտերն, Դրոս, Կրեպելին, Աերենսկյուն, Շուլց, Լայ, Առնդ, Պրեյեր, Կառլպոլ և Լամպրեխսկարելի է տեսնել, որ բոլոր մասնագէտներն էլ աշխատակցում են մանկագիտական հարցերի վելայ: Այստեղ մանկագիտութիւնը զընտառուում է էքսպերիմենտալ մանկավարժութեան հիմնական դպրոցն անցած դիտնականների ձեռքում, որոնք հարցերը վճռում են լաբորտորիաներում՝ անհատական, էքսպերիմենտալ եղանակով, և եթէ Ամերիկայում շարժումը տարածուել է մակերեսոյթապէս, Գերմանիայում, ընդհակառակն՝ զէպի խորն է զնացել: Գերմանիայում միատեսակ հետաքրքրութեամբ և եռանգով մշակւում են երեխաների ստախոսութեան (Շտերն), խաղերի (Դրոս). վերաբերեալ հարցերը, դիդակտիկական (Լայ), ընդհանուր (Վոյման) և յոզնածութեան վերաբերեալ (Կրեպելին) խնդիրները:

11. Ինչ վերաբերում է Խուսաստանին, այստեղ թէև մանկաբանութեան շարժումն սկսուել է աւելի վաղ՝ քան մի ուրիշ տեղ Արկածուկու «Աշակերտական յոզնածութիւն» աշխատանքով, սակայն սիստեմատիկ աշխատանք սկսուեց 1901 թուից, երբ լոյս

Академик Чеховъ «Современная экспериментальная психологія въ ея отношении къ школьному дѣлу» *шѣриштѣнрѣнр*: *Физиорропи-
ческій* **Чеховъ** շուրջը կազմուեց մանկագիտների մի շրջան՝ Կո-
զакъ, **Монгомѣри**, **Фишъ**, **Людвигъ**, **Бланшъ**, **Бенни**, **Гендер**, **Лин-
денъ**, **Майсъ**, **Пришліцъ**, **Шоунъ** կազմակերպեցին մանկագիտական
դասընթացքներ, ապա լարորատորիա, իսկ այժմ մանկավարժա-
կան ճեմարան: *Физиорропи-
չескій* գումարուած էքսպերիմենտալ ման-
կավարժութեան առաջին համագումարը 1910 թ. ցոյց տուեց, որ
մանկավարժական ինդիբների ճիշտ ուսումնասիրութեան պահանջը
արդէն հասունացել է և հնարաւոր է ուսումնասիրութեան զործը
կազմակերպել կանոնաւոր ծրագրով: *Առուական* մանկարանու-
թիւնը առանձնայատուկ կնիք շէ կրում. այդտեղ կարելի է տես-
նել ըոլոր ընդհանուր ուղղութիւնների նմանողութիւնները՝ թէ
զերմանացիների, թէ ֆրանսիացիների և թէ ամերիկացիների
աղղեցութիւնը երկում է:

12. 1911 թուին, *Ռեզիտյում* գումարուեց էքսպերիմենտալ
մանկավարժութեան (մանկարանութեան) առաջին համաշխար-
հային կոնցրէսը, և պէտք է շեշտել, որ մանկագիտութեան մէջ
էքսպերիմենտալ մեթոդը արդէն ըուլորի կողմէից ընդունուած
է. սկզբունքային տարրերութիւններ չկան, հարցը միայն նրա-
նումն է, թէ մասնաւոր ընոյթի աշխատանքները որպիսի աւելի
ճիշտ մեթոդով պէտք է կատարուեն՝ ամրող մանկագիտական
սիստեմ ստեղծելու համար:

Գրականութիւն.

- I. **Ամերիկական** 1. Чемберленъ—Дитя. 2. Друммонд—Введение
въ изучение ребенка.
- II. **Անգլիական** 1. Мконстэрбэргъ Психологія и учитель. 2. Джемсъ
Селли—Психология иъ ея отношеніи къ воспитанію. 3. Изу-
ченіе ребенка.
- III. **Ֆրանսիական** 1. Бзне Современные идеи о дѣтяхъ. 2. Кла-
паредъ Психология ребенка и экспериментальная педагогія.
- IV. **Գերմանիական** 1. Мейманъ—Лекціи по эксперимент. педаго-
гики. 2. Гроссь Душевная жизнь ребенка. 3. Штернъ—Раз-
витіе рѣчи у ребенка. 4. Лай—Экспериментальная дида-
тика.
- V. **Франшія** 1. Румянцевъ—Педологія. 2. Нечаевъ—Современная
эксперим. психологія въ ея отношеніи къ школьному дѣлу.
3. Лазурскій Очеркъ науки о характерахъ.

Տիցտ Մագագիւնց.

